



108. ՄԻՍՐՈՒԿԵՐ ՀԱՐՍ

Կիսուր մե տոպրակ մե սիսեռ կը դնե սնդկի դլուլս, նորհարս կը սեպկոի ի սիսեռ, օրեկան չուղածի շափ սիսեռ կը դողնա կուտե. կիսուր կը տեսնա օր օրավոր սիսուի տոպրակ կը դարտըկվի, գող ո՞ն է, շը՛ր գինի, հարսի վրա շըք տանե՝ էդ էլ շէղնի, կըսե.

— Նոր հարս ըսկի սիսեռ կը գողնա՞:

Հարս, դու հարս, օր ուր վրա շըք շը տանին, օր մե տախտ կավլե, մըջ ժեխին սիսեռ մե կը գտնա, կը տանե կիսրոջ կը ցուցու.

— Կիսո՛ւր ջան,— կըսե,— իդա ի՞նչ բան է:

Կիսուր մըջ ուր մտքին կըսե. «Վո՛ւյ, քոռնա՛մ ես, քիչ մնալոջ դհարս սիսուի դող հանենք, իմ անլեզու, անասուն հարս սիսեռ ի՛նչ է, շը «անշնա»:

Մկա-մկա լե, օր մարդ յա կնիկ գողտուկ բան մե վերցու ուտե, սրբաբերնի կանի մեկ դեն, կըսին՝ «Միսրուկեր հարսն է, ըսկի բանե խաբար շունի...»:

